ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅՎԱԳՅՈՒՏ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻՑ

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

1968 թ. օգոստոսին սույն հաղորդման հեղինակները Սևանի ավազանում հետախուզական շրջագայություններ կատարելիս Մարտունիի շրջանի Ն. Գետաշեն գյուղում ձեռք բերեցին գունազարդ մեծ անկանթ կճուճ, հետաքրքիր հարդարումով։ Անոթը հայտնաբերվել է բնակարանային շինարարության ժամանակ «Դիմացի թաղ» կոչված վայրում, Արգիճի գետի ձախ ափին։ Դամբարանում եղել են նաև նման մի կճուճ և այլ իրեր, որոնք չեն պահպանվել։

Կճուճն ունի հարթ հատակ, քիչ ձգված իրան, համեմատաբար կարճ, լայն վիզ և դուրս փռված պսակ։ Ողջ մակերեսը պատած է կարմիր ներկով և փայլեցված է (բարձրությունը՝ 41,5 սմ, բերանի տրամագիծը՝ 17,7 սմ, հատակի տրամագիծը՝ 14,5 սմ, իրանի լայն մասի տրամագիծը՝ 34,0 սմ, վզի բարձրությունը՝ 6,5 սմ)։ Վզի ստորին մասով անցնում են սև ներկով արված երեք զուգահեռ գոտիներ։ Պսակից դեպի այդ գոտիներն են իջնում ուղղահայաց երեքական գծեր, որոնք վիզը բաժանում են հինգ մասի։ Իրանի վերին մասում պատկերված է կենդանիների հետապնդման տեսարան։ Վերարտադրված են իրար հետևից ընթացող, վազքի մեջ պատկերված մեկ էգ և մեկ արու քարայծեր, արու հսկա եղջերու, որի առջևից ընթանում է էգ եղջերուն։ Կենդանիների այս խմբին հետապնդում են երկու արու շներ՝ երախները բաց վիճակում։ Այս գոտուց վերև պատկերված են հակառակ ուղղությամբ ընթացող 6 սագեր, որոնք փոքր-ինչ տարբերվում են իրարից։

Պատկերներն աչքի են ընկնում իրենց արտահայտչականությամբ և կատարման բարձր վարպետությամբ։ Նկարիչը մեծ իմացությամբ վերարտադրել է կենդանիների մարմնի առանձին մանրամասները, շեշտելով եղջերուների և քարայծների իրանների սլացիկությունը և վեհությունը։

Կենդանիների յուրաքանչյուր պատկերի վերևում նկարված մեկական թռչունները թույլ են տալիս ենթադրելու, որ տեսարանը կապված է պաշտամունքային հնամենի հասկացությունների հետ։

Մեր նախնիները բնությունը և նրա հետ կապվող պաշտամունքը հաճախ են պատկերել իրենց շրջապատող առարկաների վրա տարբեր արտահայտչական միջոցներով, յուրաքանչյուրի մեջ տեսնելով այս կամ այն երևույթի խորհրդանիշը։ Ալիքաձև զարդը երկնքի պայմանական արտահայտությունն էր։ Թռչունը սերտ կապվում էր երկնքի հետ և արևի խորհրդանիշ էր հանդիսանում։ Այն կապվում էր նաև ջրի պաշտամունքի հետ և այլն[1]։

Ն. Գետաշենի անոթի վրա վերարտադրված են բնության երեք կարևոր տարրերը, հողը՝ որն արտահայտված է երկրային կենդանիներով, ջուրը՝

---

[1] Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949.

ջրային թռչունների միջոցով և երկինքը՝ վղին արված զարդերի միջոցով։ Էդ քարայծի վրա արված բոլորակ նշանները թերևս խորհրդանշում են արևը և լուսինը կապվելով պտղաբերության և կյանքի հարատևման հետ։ Հավանաբար նույն նշանից եղել է էգ եղջերուի վրա, որը պատկերի վնասված լինելու

պատճառով չի նկատվում։ Լուսատուներին ընդհանրապես վերագրվում էր մոգական ազդեցություն՝ կենդանական աշխարհի վրա։ Հին դիցաբանության և ազգագրության մեջ (մասնավորապես հայկական) մեծ տեղ է հատկացվում կենդանիների պաշտամունքին։ Քարայծը կապվում էր միաժամանակ կայծակի հետ, իսկ եղջերուն՝ լուսնի։



Ձևով և կատարման եղանակով նման գունազարդ անոթներ Հայաստանում և Անդրկովկասում հայտնի են մի շարք վայրերից, որոնք թվագրվում են մ. թ. ա. XVIII—XVI դդ.։ Այդպիսի գունազարդ անոթներ գտնվել են դեռ անցյալ դարի վերջերին Թազաքենդի դամբարանադաշտում[2]։ Հայտնի են

[2] К. Х. Кушнарева. Тазакендский могильник в Армении. СА. 1960. № 1.

նաև Կիրովականից[3], Ղրղիից[4], Լճաշենից[5], Գառնիից[6], Թրիալեթիից[7] և այլ վայրերից։ Ն. Գետաշենի անոթը խիստ տարբերվում է իր զարդամոտիվներով նշված բոլոր գունազարդ անոթներից[8] և հանդիսանում է առաջին օրինակը Անդրկովկասի հնավայրերում հայտնաբերված նման խեցեղենի մեջ։ Անոթի պաշտամունքի հետ կապվող զարդամոտիվը հետագայում հանդես է գալիս բրոնզե գոտիների վրա, իսկ քննարկվող ժամանակաշրջանում և ավելի վաղ, այդպիսի մոտիվներ հանդիպում են միայն ժայռապատկերների վրա (Գեղամա լեռներ, Սիսիան և այլն)։

Այս անոթն ընդլայնում է մեր պատկերացումները մեր նախնիների պաշտամունքի և արվեստի մասին։

УНИКАЛЬНАЯ НАХОДКА ИЗ БАССЕЙНА ОЗ. СЕВАН

А. А. КАЛАНТАРЯН, Ж. Д. ХАЧАТРЯН

Резюме

В 1968 году в сел. Н. Геташен Мартунинского района случайно был обнаружен расписной сосуд с богатой орнаментацией. На красном фоне сосуда изображена сцена погони: две собаки преследуют двух горных козлов (самка и самец) и двух оленей (самка и самец). Над этой сценой изображены 6 уток, несущихся в противоположную сторону. На шейке сосуд имеет горизонтальные и вертикальные линии. Сцена явно культового характера и связывается с космогоническими представлениями наших предков.

По своей форме и технике нанесения украшений данный сосуд можно отнести к расписной керамике 18—16 вв. до н. э.

Аналогичные рисунки культового характера встречаются в первой половине II тысячелетия до н. э. и в более раннее время на наскальных изображениях (Гехамские горы, Ухтасар в Сисианском районе и др.), а позднее появляются на бронзовых поясах. Изображения на сосуде представляют ценный источник для изучения верований и искусства наших предков.

---

3 Б. Б. Пиотровский, նշվ. աշխ.; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964.

4 Պեղումները կատարվել են Ս. Եսայանի կողմից, նյութերը պատրաստվում են հրատարակության։

5 Հ. Հ. Մնացականյան, Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները. «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2։ Է. Վ. Խանզադյան, Լճաշենի № 6 կուրգանը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 2։

6 Բ. Ն. Առաքելյանի պեղումները։

7 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941.

8 Լ. Լ. Կարապետյան, Հայաստանի գունազարդ խեցեղենի ձևերը և զարդանախշերը, «Պատմա-Բանասիրական հանդես», 1964, № 3։